

891.99

Q-47

ՄԱՆՈՒԿ ԳԵՈՐԳԵԱՆՅ

ԳԱՌՆՈՒԿԻ,

ԳԱԻԹԻ

ԵՒ

ՍԻՐԱՆՈՅՇԻ

ՀԵՔԵԱԹԻ

ՀԱՆԴԵՐՁ ՆՐԳԵՐՈՎ

1908 թ.

Երևանի տպարանի Արշակ Յակոբեանցի և որդիք

97.93

Գ-47

արմ-Է

6 028

891.93

9- -47

10 JAN 2003
10 NOV 2011

ԳԱՌՆՈՒԿԻ, ԴԱԻԹԻ
ԵՒ ՍԻՐԱՆՈՅՇԻ
ՀԵՔԵԱԹԸ

ՀԱՆԴԵՐՁ ԵՐԳԵՐՈՎ



18 MAR 2013

25414



59361-66

ԳԱՌՆՈՒԿԻ, ԴԱԽԹԻ ԵՒ ՍԻՐԱՆՈՅՇԻ ՀԷՔԵԱԹԸ,
ՀԱՆԴԵՐՁ ԵՐԳԵՐՈՎ

Երևան նահանգի ջրաբախշ գաւառի գաշտային զիւղում մի մարդ է լինում՝ Յարութիւն անունով. սորան ունենում է հինգ զաւակներ՝ չորսն տղայ և մէկն աղջիկ. տղաներից երեքը տարափոխիկ ցաւով մի անգամից մեռնում են, իսկ մնում է մի տղան՝ Գառնուկը և մի աղջիկը Շողա-կաթը: Տղէն ութ տարեկան էր, իսկ աղջիկը վեց ամսա-կան: Յարութիւնը, տեսնելով իր երեք զաւակների մահը, սկսեց մտածել և հոգս անել, բայց շատ չանցաւ, յանկարծ հիւանդացաւ և մի քանի օր հիւանդանալուց յետոյ, երբ զգաց իւր մահը, կանչեց իւր կնոջն ու բարեկամներին և իւր որդիքը յանձնելով նոցա, կնքեց իւր մահկանացուն: Լսելով դրացիները նրա անակնկալ մահը, հաւաքուեցին և մեծ բազմութեամբ թաղեցին նորան: Այրի Մարգարիտը տեսնելով զաւակների և մարդի կորուստը, սկսեց կսկիծ անել, այնպէս որ աչքերից շուտով խեղճացաւ և այդ դրու-թեամբ դժուարութեամբ էր ապրում: Նորա տղէն եղաւ տասն և հինգ տարեկան և ապրում էր հողագործութեամբ, մինչև քսան տարեկան լինելն, երբ սիրեց մի աղջիկ, Սիրանոյշ անունով: Այդ աղջիկը իրենց դրացի Վար-դան Կարապետեանի աղջիկն էր և իր սրտի մէջ պա-հում էր ծածուկ այդ սէրը: Քսան և հինգ տարեկան Գառնուկը չունէր զիւղում ոչ մի ազգական և ոչ մի բարեկամ, որ իր ցաւը յայտնէր նրանց, որ նրանք կա-րողանային հոգալ դորա մասին, ստիպուած պէտք էր ինքն իրեն հոգս անէր: Տեսնելով, որ այլևս չէ կարողանում

համբերել, նա մի օր, պատահելով այդ աղջկայ մօրն, առաջարկութիւն արեց, որ աղջիկն իրեն տան: Աղջկայ մայրը պեանելով տղայի ներքուստ տանջուելը, պատասխանեց, թէ այսուհետեւ հոգս մի անիլ այդքան դորա մասին, հաստատ խօսք եմ տալիս, որ այս օրուանից իմ Սիրանոյշ աղջիկը քոնն է: Գառնուելը ուրախանալով իւր վիճակի վրայ, նւագարանը ձեռքը առաւ և սկսեց երգել այսպէս.

Թէ ուշացաւ, բայց կատարեց վաժագս,
Աւաղ, ժամանակս շատ է անցկացել.
Չորացած էր, կանաչ եղաւ առաջս,
Ափսոս, ժամանակս շատ է անցկացել:

Գառնուելը չէր հաւատում, որ Սիրանոյշին իրեն տան. նա երկիւղ էր անում, որ չար մարդիկ, լսելով այդ, կարող են խանդարել:

Լաւ կը լինի մարդ սիրէ և առնէ,
Չար մարդի խօսքն եթէ չը քանդէ,
Բարի աւետում, ուրախ լուր յայտնէ,
Ափսոս, ժամանակս շատ է անցկացել:

Սրտով սիրեմ, հիմա կառնեմ սիրական,
Եթէ խելքս ո՞նչ չը լինի խախտական,
Աշխարհումս շատ կայ պատճառ շարական,
Ափսոս, ժամանակս շատ է անցկացել:

Գառնուելիս բանը եղաւ շատ խորոտ,
Վարդանոցում բուրեց դրախտական հոտ,
Հեռաւոր մտքեր հաւաքւեցան մօտ,
Ափսոս, ժամանակս շատ է անցկացել:

Երգն աւարտելուց յետոյ, նա շատ ուրախացաւ իւր վիճակի վրայ, թէ, գոհութիւն Աստուծոյ, ինձ համար մասնա-

ւոր ապրում եմ, իսկ այժմ Սիրանոյշին առնելով, կարող եմ երջանիկ լինել: Գառնուելի սովորութիւնն էր քնից արթնանալով, գնալ գոմը տաւարներին նայել և առաւօտեան դէմ գոմի առանձին յարմարաւոր տեղում իւր սովորական աղօթքն անել. այդ օրը ուրախ տրամադրութեան մէջ լինելով, նոյնպէս շուտով վերկացաւ և ճրագն առնելով ձեռքը, գնաց գոմը՝ տաւարներին նայելուց յետոյ եկաւ դարձեալ սկսեց աղօթել և շնորհակալութիւն յայտնել Աստուծոյ, բայց աղօթելու ժամանակ չարքը գլխին խփեցին. Գառնուելը սարսափեցաւ, ճրագը վեր առնելով դուրս եկաւ, որ գուռը բաց անէ և տուն գալ բայց դուռը բացուելուն պէս չարքը ճրագ փչեց. վերադառնալով տուն, յայտնեց մօրն ու քրոջը, թէ գոմում ինչ է պատահել իրեն. մայրն պատասխանեց, թէ երկիւղ մի անիլ, Աստուած ողորմած է: Այդ պատահմունքի վրայ Գառնուելը մի քիչ գժւարացաւ, բայց շուտով առողջացաւ Աստուծով: Նա, գնալով Վարդանի տունը, Սիրանոյշի մայրին ասաց, թէ, ինչպէս ասում ես, կամենում եմ պատրաստութիւն տեսնել հարսանեաց ու աղջիկդ տանեմ, հաստատ խօսքի տէր ես, թէ ոչ: Վարդանի կինը պատասխանեց. թէ քեզ խօսք տուել եմ, բայց այժմ վերջնական խօսքն յայտնում եմ քեզ, որ չեմ կարող տալ, նրա համար, որ քո հասակդ մեծ է և իմ աղջիկս փոքր: Գառնուելը, լսելով այդ խօսքերը, ախրած վեր կենալով, եկաւ իրենց տունը, այնտեղ կային նաև իրեն հասակակից մի քանի երիտասարդներ. առանելով Գառնուելի տխրութիւնը, նոքա սկսեցին պատճառն հասկանալ: Առնելով նւագարանը ձեռքը, սկսեց երգով պատասխանել:

Անցաւ երիտասարդ հասակս,
Որ միտ եմ բերում, ինձ վառում է.

Նայիր իմ արքայութեան դրախտս,
Որ միտ եմ բերում, ինձ վառում է:

Ըղորդն գնաց, սուտն մնում է,
Անբախտ անձս դառնանում է,
Խելքս գլխիցս կորչում է,
Որ միտ եմ բերում ինձ վառում է:

Գառնուկ, ինչ բան հաստատ գիտես,
Միտք անելով իմացիր տես,
Բանա եղաւ երազի պէս,
Որ միտ եմ բերում, ինձ վառում է:

Երգն աւարտելուց յետոյ, կանչեց ծառային և իրա
եզներն ու ամեն մի հողագործութեան պարագայքն յանձ-
նեց ծառային, իսկ ինքն, սիրահարուած լինելով, ման էր
գալիս իւր ցաւի համար. գնալով պատահեց մի խումբ
մարդկանց և նրանցից, որ միմեանց հետ խօսում էին
Գառնուկի վրայ, լսեց հետեւեալ խօսքերը, թէ աղջիկը կը
տան, բայց հասակի մեծութեան պատճառաւ չեն տալիս:
Գառնուկն որ հասաւ նրանց այդ մարդիկն խնդրեցին որ
մի սիրահարական երգ երգէ, որովհետեւ այժմ երգերով
էր պարապում: Նա սկսեց երգել.

Հեռանում է գարունը ինձանից, բոլոր բարիքը,
Առաջան օրերը միտ բերելը լաւ է.
Թէ սխուր էին, թէ ուրախ էին այն տարիքն,
Առաջայ ժամանակը միտ բերելը լաւ է:

Մարդս մեծանում է, միտքն շփոթւում,
Խելքն ցամաքում է, անձն թառամում,
Եթէ իշխան լինի՝ սիրան է տիրում.
Առաջուայ ժամանակը միտ բերելը լաւ է:

Ա՛խ, իմ երիտասարդ ժամանակ,
Դու բանում էիր դրախտի եղանակ,
Յետին օրը շատանում է ցաւ տանջանք,
Առաջայ ժամանակը միտ բերելը լաւ է:

Գառնուկ, գարուն է, ծաղկի ժամանակ,
Թառամելով վատանում է կերպարանք.
Մարգն էլ նորա նման է նոյն նմանակ,
Առաջայ ժամանակը միտ բերելը լաւ է:

Երգն աւարտելուց յետոյ մօտի մարդիկն շնորհակա-
լութիւն յայտնեցին ու հեռացան: Գառնուկը մնաց մենակ,
վեր կենալով գնաց գերեզմանատունը, շատ ման եկաւ և
մի առ մի նայեց բոլոր գերեզմանատունն և տեսնելով, որ
անբախտութիւնը դժուար բան է աշխարհումս, սկսեց այս
երգը երգել.

Բախտաւոր մարդկանց վիճակն է բացւած,
Անբախտ մարդիկ են միշտ մոլորուած,
Ում քաղցր խոսի, խոսքն է մոլորւած,
Չարչարուելով, տանջւելով են հալածւած:

Եթէ միտք անի, նա կը շփոթւի,
Իւր թշնամեաց կամքը կը կատարւի:
Էլի խոնարհւելով իր խելքն ժողովի,
Իւր թշնամիներին ամօթալի թողնի:

Շատերն ծնում են, շատերն մեռնում,
Շատերն փափազն առած, շատերն մնում են,
Փուչ մարդկային բնութիւնը ոչ մէկին չը մնաց,
Գառնուկից զատ ցաւոյնք քանի՞ն է եղած:

Մի քանի օր անցնելուց յետոյ, Գառնուկը մտադրու-
թիւն արեց, որ գնայ Երևան քաղաքը և իր նւագարանի

համար նոր թելեր գնի. արդէն իրեն յայտնի էր, որ շատ դժուարութեամբ կարող է հասնել իր նպատակին. միշտ երգելով էր ժամանակ անցկացնում: Երևան գնալիս, ճանապարհին տեսաւ երկու մարդ մի քսան հատ սոխակներ էին բռնել և տանում էին դէպի քաղաք. Գառնուկը ասաց. եղբայրներ, այդ անմեղ թռչուններն ինչ են արել ձեզ, որ բռնելով լցրել էք վանդակի մէջ և տանում էք, զրանց զինն ի՞նչ է, ասացէք խնդրեմ և ինձանից կրկնապատիկ ստացէք և բաց անելով վանդակի դռները, թողէք գնան իրենց վարդենուն հասնեն. բայց այդ մարդիկն ամենեկին ուշադրութիւն չը դարձրին Գառնուկի վրայ. տեսնելով, որ իրեն ուշադրութիւն դարձնող չը կայ, սկսեց այս երգն երգել.

Ո՛ւմ ճանապարհն էք սպասում,
Ծաղկի կարօտ դաշտի երգիչք,
Տարակուսում, դժուար լացում,
Վարդի կարօտ դաշտի երգիչք:

Դուք զրանց ի՞նչ փռաս էք,
Բանտի միջին բռնուած էք,
Սիրուն աչքերով արցունք կածէք,
Վարդի կարօտ դաշտի երգիչք:

Ձեզի չունէք մէկ թաղաւոր,
Ազգից ունիք շատ բռնաւոր,
Խղճի եկէք, դուք անզինւոր
Վարդի կարօտ դաշտի երգիչք:

Թողեցիք դուք կանաչ խոտեր,
Մէջ աշխարհին շատ էք անտեր,
Գառնուկի պէս ունիք ցաւեր,
Վարդի կարօտ դաշտի երգիչք:

Երգը վերջացնելուց յետոյ, անցաւ գնաց Երևան նւագարանի համար թելեր գնեց և վերադառցաւ տուն: Տեսնելով Վարդանը և իւր կինը, որ Գառնուկը սիրահարւում է իրենց Սիրանոյշ աղջկայ վրայ, միանգամայն ձեռք քաշող չի, մտածում էին միջոց գտնել ուղարկել ուրիշ գիւղ. երկար ժամանակներով աղջկան պահում էին տանը և թոյլ չէին տալիս տանից դուրս ելնելու: Մի օր Սիրանոյշին ուղարկում են ծաղկալից դաշտ՝ զբօսնելու քանի պահապաններով. երբոր Գառնուկը լսում է Սիրանոյշի դաշտ գնալը, վեր առնելով իր նւագարանը, գնում դաշտը, ասելով, թէ այստեղ ծնողքը ինձ չեն թոյլ տալիս տեսնելու, գտնէ դաշտում կարող եմ մի անգամից ազատ կերպով տեսնուել: Գնալով հասնում է դորանց. բայց պահապանները դարձեալ թոյլ չեն տալիս, որ մօտ գնայ և երկու բառ խօսի: Գառնուկը, տեսնելով տեսակ տեսակ ծաղիկներ և իւր սիրունին նրան մէջ ման գալիս, նւագարանը առնելով ձեռքը, սկսեց այս երգը երգել.

Հարաւ եղանակով ձեր երեսը կը բացւին,
Տխուր մնացի ես ձեզանից, ծաղիկներ,
Քաղցր հոտերդ բոլոր դաշտը կը լցւի,
Տխուր մնացի ես ձեզանից, ծաղիկներ:

Շատ լաւ կը լինի մարդուս ծաղկասիրութիւն,
Դժուար գործ է սիրահարից անջատութիւն,
Չարչարեցի ձեզանից ես չառայ բարութիւն.
Տխուր մնացի ես ձեզանից, ծաղիկներ:

Աչքամուտէք, ոչ թէ անձի գնազան,
Ամենից գերազանց մարդ կը սիրէ անդրանիկ
Սիրեկան, պայծառ էք զիւրեկան,
Տխուր մնացի ես ձեզանից, ծաղիկներ:

Ախ, գարնան ծաղիկները ինչ լաւ բացվելա,
Քանի տարի իմ կեանքից անցել ա,
Գառնուկի բախտն իրանից դառնացելա,
Տխուր մնացի ես ձեզանից, ծաղիկներ:

Երգը վերջացնելուց յետոյ, ուզեց գնալ դէպի սիրու-
հին, բայց պահապանները դարձեալ չը թողեցին, որ երեսն էլ
տեսնէր: Թողնելով ծաղկաբեր դաշտը, եկաւ անասնաժողով
դաշտը, տեսաւ, որ այնտեղ տեսակ տեսակ թռչունները
կանոնաւոր երգում են, նազարանը առնելով ձեռքը,
ինքն եւ սկսեց երգել:

Ձայներդ դառն է, միշտ դուք լալում էք,
Ինձ նման էք, կանոնաւոր թռչունք,
Թռչում չէք, գետինը իջնում էք,
Ինձ նման էք, կանոնաւոր թռչունք:

Սիրուհի էք սիրում, թէ ջոկնուում էք,
Ինչ հաշիւ ունիք, որ պահանջում էք,
Ո՞վ է ձեր դատաւորն, որ գանգատուում էք,
(Յաւներդ) ինձ նման էք, կանոնաւոր թռչունք:

Թռչունների ձայնը լսելով, իմացաւ Գառնուկը որ այդ-
տեղ մէկ բան պատահած կը լինի, քիչ առաջ անցաւ եւ
տեսաւ որ օձը այդ թռչունների ճուտները բնից հանելով,
ուտում է. մինչև հասնիլը, օձը ձգում է իրեն քարափը եւ
ազատուում. Գառնուկը տեսնելով այս բանը սկսում
է երգել:

Ձեր ցաւն է ինձ այստեղ բերել,
Ժանտ օձը ճուտներդ կերել,
Օթեանդ է քանդել, պալատը ձեզնից առել,
Յաւներդ ինձ նման է, անգինուոր թռչունք:

Գառնուկը չը կարողացաւ ձեր ցաւին անել դատաստան,
Ո՞վ ունէք քամակներդ, որ զինւորներդ դան.

Դուք էլ ինձի նման անտէր, անտիրական,
Յաւներդ ինձ նման է, անգինուոր թռչունք:

Երգը վերջացնելուց յետոյ, վերագառնաւ տուն, դար-
ձեալ խնդրեց գրացիներից մի քանիսին եւ ուղարկեց
Վարդանի տունը աղջիկը խնդրելու իրեն կնութեան, խոս-
տանալով, որ իր կայքը, տուն ու տեղը պատրաստ է տա-
լու հակառակ դէպքում. այդ մարդիքն յանձն առան,
վեր կացան եւ գնացին Վարդանի տունը, յայտնեցին, որ
Գառնուկն է մեզ ուղարկել քեզ մօտ եւ խնդրում է քո
Սիրանոյշ աղջիկը, խոստանալով ձեզ ամեն բան, ինչ որ
կամենաք: Վարդանը մերժում է դրանց առաջարկութիւնը
եւ ասում է. ես չունեմ աղջիկ Գառնուկին տալու, որովհե-
տե նա հասակով մեծ է. թէ եւ այդ մարդիկը շատ համոզե-
ցին, բայց հնար չեղաւ. վերկենալով եկան, հանգամանքը
պատմեցին Գառնուկին, թէ չէ տալիս. Գառնուկն մնաց
տարակուսած, չէր իմանում թէ ինչ անէր. վճռեց ինքն
անձամբ գնալ, ասելով թէ կամ մէկ անգամից սպանեն ա-
զատւեմ, կամ թէ աղջիկն տան, երկու առաջարկութիւն,
որն ուզում են, թող կատարեն. ուղղակի գնաց Վարդանի
տունը, սկսեց շատ խնդրել ու աղաչել, դարձեալ հնար չե-
ղաւ. բացի աղջկայ տալը՝ եւ կամենում էին փնտսել: Գառ-
նուկը, տեսնելով որ հնար չը լինի, հազիւ կարողացաւ
իրեն մի կերպ դուրս գցել եւ անփնաս հասնել իր օթեանը:

Դորանից յետոյ Վարդանը գնում է հասարակութեան
տանուտէրի մօտ գանգատ, թէ Գառնուկ Յարութիւնեանը
մեզ շատ է նեղութիւն տալիս, խնդրեմ կանչես եւ պատ-
ւիրես, որ միւս անգամ մեզ անհանգիստ չանի: Տանու-
տէրը Սեզաններ ասում թէ ամարանոցումն էր ապրում:
Նա Գառնուկին առանձին կանչելով իր մօտ, ասեց.

Գառնուկ, դու ինչո՞ւ ես այդ մարդուն չարչարում ես
 նեղութիւն տալիս, որ քեզ վրայ գանգատում է. այնտեղ
 ես կային մի քանի ուրիշ մարդիկ. Գառնուկը պատասխա-
 նեց, թէ ես այդ մարդուն ոչ նեղութիւն եմ տուել եւ ոչ
 չարչարել, խնդրեմ թող վկայեն այդտեղ ներկայ եղող
 մարդիկը. տանուաէրը հարցրեց այդ մարդկանցը, որոնք
 պատասխանեցին, թէ Գառնուկը անտեղի նեղութիւն չէ
 տուել այդ մարդուն, այլ սիրահարուած լինելով դորա աղ-
 ջկայ վրայ, հայրապետների դրած օրէնքով ուզում է իրեն
 կնութեան, բայց Վարդանը չէ տալիս: Այդտեղ եւս կար մի
 պարսիկ Հաջի Իսմաիլ անունով, Երևանցի. տանուաէրը
 մանրամասնաբար գործի եղելութիւնը հասկնալուց յետոյ,
 Հաջի Իսմայիլի հետ միասին շատ համոզեցին Վարդանին, որ
 աղջիկը տայ Գառնուկին, բայց հնար չեղաւ, Վարդան ան-
 բաւական մնալով իւրեան գանգատից, թողեց գնաց, նոյն-
 պէս եւ ուզում էր գնալ Գառնուկը, բայց այդտեղ եղող
 մարդիկը խնդրեցին որ իրենց համար մի երգ ասի, նոր
 գնայ. նա էլ սկսեց.

Նոր էք բացել, դրախտն է ձեր առաջին,
 Սէրից թերատ, կարօտ մնացի, ծաղիկներ,
 Քանի որ կայ մինչև աշունք ձեր առաջին,
 Սէրից թերատ, կարօտ մնացի, ծաղիկներ:

Կապոյտ ծաղիկ, տերև կարմիր լաւանդոյն,
 Վարդի աչքն ու թաց համ տուող սէրատուն,
 Արև ծաղիկ լուսնոյ բաժին աստղադոյն,
 Սէրից թերատ, կարօտ մնացի, ծաղիկներ:

Շուշան ծաղիկ, սառնատերև նունիան
 Սուսումբարն է կամ մանիշակ կատարեան,
 Ռէհանն է ամբիկ ծաղիկ անթառամ,
 Սէրից թերատ, կարօտ մնացի, ծաղիկներ:

Ութն ծաղիկ ծաղիկների գլուխն է,
 Գառնուկը սիրունու հոգու դրախտն է.
 Գարունքը ծնունդն է աշունքն ձեր մահն է,
 Սէրից թերատ, կարօտ մնացի, ծաղիկներ:

Երգը վերջացնելուց յետոյ, վերադառնալ իւր օթևանը,
 զիշերը քնեց, երազին տեսաւ, որ արեգակի ճառագայթ-
 ներ բռնած են իւր բոլոր օթևանը, աւերակ դարձած եւ
 իրենց պարտէզի բոլոր ծառերն կտրտած: Գառնուկը
 փոքր ժամանակն միևնոյն ալիսի մի երազ տեսաւ,
 երազից յետոյ շուտով վախճանուեցին երեք եղբայրն եւ
 յետոյ հայրը. դորա համար էլ նա միշտ մոռնում էր
 այս նոր երազի վերայ, թէ արդեօք ինչ պէտք է լինէր,
 բայց ոչինչ իրեն յայտնի չէր:

Գառնուկը գնաց դրացիներէից մէկի մօտ, որը որ երա-
 զահան ունէր. պատմեց իւր տեսած երազը, յուսալով,
 որ ճշտօրէն մեկնութիւն կստանա դրանից: Այդ մարդը
 պատասխանեց, թէ երկիւղ մի արտ, քեզ մեծամեծ կը
 հանդիպի: Գառնուկը, վերկենալով տխուր եւ արտում սկսեց
 գնալ դէպի տուն. ճանապարհին պատահեց նրան մի մարդ
 եւ ասեց. Գառնուկ, էլ ինչու ես այդքան մոտածում ու չար-
 չարում, Դաւիթ Արրահամեանի կինը արգէ՛ն այս երեք ա-
 միսէ, որ վախճանուել է. Դաւիթը գնացել է Վարդանի Սի-
 րանոյշ աղջիկն ուզել է իրեն կնութեան, նա էլ խօսք է
 տուել տալու աղջիկն այրի Դաւիթին: Գառնուկը, լսելով
 այդ լուրը, մտքումը զրեց գնալ զիւղից երկու վերստ հե-
 ռաւորութեամբ ջրաղացները, որովհետեւ Դաւիթը ջրաղաց-
 պան էր եւ մնում էր ջրաղացումը եւ լմանալ գործի իսկու-
 թիւնը. հասնելով Դաւիթին, Գառնուկը, բարեւ տալուց յե-
 տոյ, ասաց. Դաւիթ, լսել եմ, որ դու ուզել ես Վարդանի աղ-

Ղիկը, նա էլ խօսք է տուել տալ քեզ. խնդրում եմ ձեռք
վեր առնես այդ աղջկանից, որովհետև այս հինգ տարի է,
որ ես սիրահարուած եմ այդ աղջկայ վրայ, որը քեզ քաջ
յայտնի է. Դաւիթը պատասխանում է, թէ արդէն ամեն
բան վերջացած է և իզուր է քո խնդիրն. այս բոլորն նա
ինձ է պատկանում: Գառնուկը, լսելով այդ խօսքերը նւա-
զարանը առնելով ձեռքը, սկսում է երգել.

Կրակն ընկաւ, կանաչ ծառը վառուում է,
Տաքացողի սրտին տւետիք եղաւ,
Չարչարո՞ւոյն, տանջւողն դուր մնաց,
Անվարձ շատախօսին մխիթար եղաւ:

Դաւիթը թէև սաղ չունէր, բայց ջրաղացի չախչախ-
ների ներդաշնակութիւն իրեն սաղի տեղ համարելով, սկսեց
Գառնուկին պատասխանել.

Ինչ ես դու դուր անում բամբասանք,
Ճիշտ խօսքի տէր եմ, պատմեմ քեզ ուղիղ,
Մենք երկուսս մէկ միտ ենք և էլ մէկ հասակ,
Ճիշտ խօսքի տէր եմ, պատմեմ քեզ ուղիղ:

ԳԱՌՆՈՒԿԸ

Ես եկել եմ, որ քեզանից բան իմանամ,
Դժուար գործ է, թէ այս ցաւին զիմանամ,
Ով գիտէ, մեռնիմ, թէ մի ժամանակ մնամ,
Անվարձ շուտահաս խառն մխիթար եղաւ:

ԴԱՒԻԹ

Ես նրան ուզում եմ, նա էլ ինձ առնում,
Եթէ չը վայելենք, կըրակով վառուում,
Խեղճը ցամաքում է, մտքերն տարւում,
Ճիշտ խօսքի տէր եմ պատմեմ քեզ ուղիղ:

ԳԱՌՆՈՒԿԸ

Վիզտ տակով մնայ, այ թշնամի մարդ,

Ինչո՞ւ համար դու ինձի հետ եղար վատ,
Եթէ ամուսնանում էիր, սիրուններ կար շատ,
Անվարձ շուտահասի մխիթար եղար:
Դաւիթը կնոջ վախճանելու մասին շատ էր հոգս ա-
նում և ուզում է բանն իստակել:

ԴԱՒԻԹ

Անբախտ մարդ եմ ես, ցաւի մէջ վառեցիմ,
Ամեն գործերն փորձով չափեցիմ,
Սոված գայլ եմ, առիծի պէս ճանկեցիմ,
Ճիշտ խօսքի տէրն եմ, պատմեմ քեզ ուղիղ:
Դաւիթն ասում է Գառնուկին. խնդրում ես, թէ եր-
կուղ տալիս:

ԳԱՌՆՈՒԿԸ

Բարակ թելին չունի ոյժ ու հարաքաթ (գորութիւն)
Ոչ, քեզի խնդրում եմ, ոչ ունիմ գանգատ,
Յաջողութիւնս սակաւ անտէր մնաց, վատ բախտ,
Անվարձ շուտահաս էր, աւետիք եղաւ:

ԴԱՒԻԹ

Ես նրան առնում, նա ինձ՝ առաջուց,
Երկու սէրն է ամեն մի տեղ օրհնւած.
Չօրքեր ունիմ ինձի քամակս կազնւած.
Շխտակ խօսքի տէրն եմ, պատմեմ քեզ ուղիղ:

ԳԱՌՆՈՒԿԸ

Մաքուր գրքին չար գրերը գրեցիր,
Յախաճանս իմ վարդս արմատից հանեցիր,
Գառնուկիս սրտին դու նետեր խփեցիր,
Անվարձ շուտահասի մխիթար եղար,

ԴԱՒԻԹ

Արժանի է Դաւիթին, թող առնի փափագ,
Ինձ ինչ փնտս է, դու անում ես աղաղակ,
Սիրանոյշը ինձ վարդանոց, ես նրա սոխակ,

Ճիշտ խօսքի տէր եմ, պատմեմ քեզ ուղիղ:
Պառնուկն այս խօսքերը լսելուց յետոյ, սիրտը տխրե-
ցաւ. գալով քարոտ սարի գլխին, սկսեց այս երգն երգել.

Հիմա ես եղայ անգաղար,
Ախ, իմ դատարկ, դառնոտ օրեր,
Ի զուր ման կուգամ սար ու քար,
Ախ իմ դատարկ դառնոտ օրեր:

Էլ չեմ գտնիլ մէկն հարմար,
Յիմա սիրտս ելաւ տկար,
Խղճալի անձս, զուր ճնշուեցար,
Ախ, իմ դատարկ, դառնոտ օրեր:

Պառնուկը փափագն չառաւ,
Չար մարդկանց սիրտն դադարաւ,
Այլոց փափագն կատարաւ,
Ախ, իմ դատարկ, դառնոտ օրեր:

Երգը վերջացնելուց յետոյ, վերադառնալիւր օթեանը:
Ջրադացներում շատ մարդիկ կային, լուր բերեցին գիւղը,
Թէ Գաւթի Պառնուկին երգով յաղթեց և անսպասառ
այդ աղջկան կառնի: Երիտասարդները լսելով այդ լուրը,
հաւաքւեցան Պառնուկի շուրջը և սկսեցին հարց ու փորձ
անել: Պառնուկը նուազարանն առնելով ձեռքը, սկսեց
երգով պատասխանել.

Վարդարանը յանձնեցին ագռաւի կամքին,
Ագռաւն ինչ գիտէ՝ նա թանկազին է,
Խեղճ սոխակը վարդի համար վառւում է,
Նորա համար վարդը իրա վիճակն է:

Սէր սիրելով, ցաւի մէջը եփւեցի.
Քանի տարի իմ մտքերով կապւեցի,
Սէրատէրիս մօտէն շուտով խաբւեցի,
Գիտում էին սէրատէրերն սիրահարինն է:

Այն այլոց, մարդը մարդի կը ճոնաչի,

Ամենայն գործ իրա տեղը կը հառաչի,
Պառնուկը սէր սիրելով, հիմա կամաչի,
Ես գիտում եմ յարգը մարգարէին է:

Սորանից մի քանի օր անցնելով, եկան երկու մարդ
Պառնուկի մօտ և ասացին. Պառնուկ, դու ի՞նչու ես այդ-
քան հոգս անում. մենք հաստատ գիտենք, որ աղջիկը քեզ
է առնում: Պառնուկը նուազարանն առնելով սկսեց երգել.

Պառնացաւ սիրատէր ինձանից հեռանալ,

Սիրելու փոխարէն ատելը լաւ է,
Արեգակը որ չեղնի սերմունքի վերայ,
Կանաչի փոխարէն չորանալը լաւ է:

Մարդս օթեանից որ չը քաղի ծաղիկ,
Ինչու համար նորա համբաւը պատմի աղէկ,
Միտ անելով, որ հիմը հաստատի,
Շինելու փոխարէն աւերակ լաւ է:

Պառնուկ, դատաւորը որ չը լսի մարդու զանգատ,
Ինչպէս քար խփի նորա ճակատը,
Գլուխը ցաւալով, աչքն արտասուք,
Ցաւը պատմելու տեղ՝ չպատմելն լաւ է:

Երգը վերջացնելուց յետոյ, եկան պատմեցին Պառնու-
կին, թէ Վարդանը Կաքաւաքար գիւղից իւր բարեկամներին
բերել է և իւր աղջիկն ուզում է մի ժամանակով ուղար-
կի այնտեղ: Պառնուկը, լսելով այդ խօսքերը, ասում է. ե-
րեւի այդ աղջիկը Դաւթին չեն տալիս և ինձ խաբում են.
Կրկին տաքանում է և վերկենալով, տեսնում է, որ ուղիղ,
այդ մարդիկ Վարդանի աղջիկը տանում են Կաքաւաքար
գիւղի ճանապարհով: Այդ ճանապարհի վրայ մի կապոյտ
խաչ քար կար. շտապելով յետևներիցը, խաչ քարի մօտ հասաւ
նրանց և բարկանալով դրանց վրայ, թէ ուր էք տանում իմ
սիրունին, կը մահաճամ և թոյլ չեմ տայ տանելու, առաջ-
ները կտրելով սկսեց այս երգն երգել.

59361.66



Աւերակ մնացիք օթեան,
Բանտ չը մտնեմ, քարից քցեմ ինձ լաւ է,
Սիրտս ու միտս ձեզանից տխրեցան,
Բանտ չը մտնեմ, քարից քցեմ ինձ լաւ է:

Հարսանիքը ինձի մահ դառաւ,
Չորացաւ ծաղիկները, հիմա չոր ցախ դառաւ,
Վատ վիճակից չար դրողն ինչ արաւ,
Բանտ չը մտնեմ, քարից քցեմ ինձ լաւ է:

Գառնուկն օթեանից հեռացաւ,
Մայրս արցունք թափելով, աչքերից խեղճացաւ,
Անտէք քոյրս երկրից կշտացաւ,
Բանտ չը մտնեմ, քարից քցեմ ինձ լաւ է:

Երգն աւարտելուց յետոյ, վեր կացաւ դորանց ճանապարհի վրայ կազնեց. վարդանը տեսնելով, որ այլևս հնարք չը կայ անցնելու, սկսեց օգնութիւն կանչել գիւղից, բայց ոչ ոք չեկաւ օգնելու. հնարները կտրւեց, դարձեալ վերադառնալ գիւղը: Խնդրելով մի քանի մարդկանց, դարձեալ ուղարկեց վարդանի տունը՝ աղջկան խնդրելու, բայց վարդանը մերժեց, ասելով. ես աղջիկ չունեմ նրան տալու: Դաւիթը տեսնելով, որ Գառնուկի մարդկանց մերժեցին, հրա կողմից մարդիկ ուղարկեց վարդանի մօտ Սիրանոյշի ձեռքը խնդրելու. վարդանը իւր աղջիկը տալով Գառնուկին, սկսեցին նշանադրութեան կարգն կատարել: Գառնուկը տեսնելով, որ բանը բանից անցկացաւ, սկսեց թերահաւատութիւններ անել, ոչ ազօթում էր և ոչ պաս էր սլահում, այլ շարունակ մտածում էր և այսպէս մտածելով երազում տեսաւ որ վիշապ օձը խեղդում էր իրեն աջակողմից, բայց նոյն բալէին արևելեան կողմից երևեցաւ սուրբ Գեղարզը, վիշապ օձը անյայտացաւ, նորից տեսաւ սև հրեշտակներ:

Իշան. դորանց տեսնելուն պէս աւելի շփոթվեցաւ, երբ արթնեց քնից, դարձուրեց նորից մտաբերելով հաւատը դէպի Աստուած: Նա ուղևորւեց դէպի Սուրբ Գեղարզ ուղտադրութեան. հասնելով վանքին, այնտեղ եղող մարդիկը, տեսնելով նրան, հարցրին. այ տղայ, ինչու է այդպէս դէմքդ փոխւել. Գառնուկը պատասխանեց նրանց թէ սիրահարութիւնից է. տեսնելով այնտեղ նաև վանահօրը, Գառնուկը զիմեց նրան այս երգով.

Առաքելոյ տեղակալ էք,
Սուրբ էք դուք, հոգով մաքուր հարք,
Մարգարէից քաղցր բառն էք,
Սուրբ էք դուք, հոգով մաքուր, հարք:

Տարւայ շատ օրերը պաս էք,
Սուրբ աւետարան միշտ կասէք,
Աստուածային բարեխօսէք,
Սուրբ էք դուք, հոգով մաքուր, հարք:

Յանապատի դուռ կը բացէք,
Սրբոց մասունքը կը դասէք,
Պատարագին շատ կը լացէք,
Սուրբ էք դուք, հոգով մաքուր, հարք:

Քիչձ էլ Գառնուկին օրհնէք,
Աստուածային պատու կաննէք,
Հրեշտակի պէս կազօթէք,
Սուրբ էք դուք, հոգով մաքուր, հարք:

Երգը վերջացնելուց յետոյ Գառնուկը խնդրեց վանահօրից, որ վանքերի դռները բաց անեն. վանահայրը հրամայեց՝ բաց արեցին. Գառնուկը շուրջ վանքերը մի առ մի գնալով և ազօթելով, կատարեց իւր ուխտադրութիւնը: Վանքերը երթալուց ու համբուրելուց յետոյ, իրեն բոլորովին փրկւած տեսաւ. այդ գիշերը մնալով այդտեղ, քնեց

երազին տեսաւ, որ երկու արեգակ վանքի վրայ կանգնած են և անտառը բոլորը լոյսով լցւած է, արթնեց և տեսաւ որ երազ էր: Գառնուկը մի քանի օր մնաց այդտեղ և մի օր մտաբերելով խղճուկ մօրն ու քրոջը, վանահօր աջը համբուրելով, շնորհակալութիւն յայտնեց և վերադառնալ գէպի տունը: Ճանապարհին հասնելով պարսկաբնակ Ագարակ գիւղի սարը, նստեց հանգստացաւ և ըսկսեց մտածել, թէ այսինչ բան էր պատահեց ինձ և ըսկսեց ինքն իր ցաւը իրեն յայտնել ու այսպէս երգել.

Ա՛խ, իմ գարնան ծաղիկ, չորացաւ թափաւ,
Ձեմ գիտում քնած եմ, թէ հարբած եմ ես,
Ցաւը դիպաւ ինձի վառեցաւ եփաւ,
Ձեմ գիտում քնած եմ, թէ հարբած եմ ես:
Ծաղկատէրը պէտք է իմանայ պտղի ժամանակ,
Ձիմանալով սիրտը կը մնայ անփափազ,
Խօսքը չի անցկենայ, ո՞ւմ անի աղաչանք,
Ձեմ գիտում քնած եմ, թէ հարբած եմ ես:
Գառնուկ, դու ելար մեծ գետի կամուրջ.

Չարչարանքդ դուր, մտքերդ ամեն փուռ,
Անցաւ ժամանակս, չեմ տեսնի իմ սիրտտիրոջ,
Ձեմ գիտում քնած եմ, թէ հարբած եմ ես:
Վեր կենալով այդ տեղից, սկսեց շարունակել ճանապարհը և գալով հասաւ իրանց գիւղի սահմանին, մտիկ անելով իրա գրութեանը և վիճակին, ամաչելով իրա գործի վրա, սկսեց այսպէս երգել:

Ա՛խ, առաջւայ անցեալ օրեր,
Տխուր մնացի իմ վիճակին,
Ծաղկու՛ք ծառնունքի նուբարներ,
Տխուր մնացի իմ վիճակից:
Վայ քեզ, վատ բան արող,
Խղճալի անձս չարչաբող:

Անբախտ բերող, անբախտ տարող,

Տխուր մնացի իմ վիճակին:

Գառնուկ, վայ անբախտ մարդի մարդի օրին,

Սրտից տխուր միաքը մոլորին,

Անխիղճ, չար գիր գրողին,

Տխուր մնացի իմ վիճակից:

Երգն աւարտելուց յետոյ, կամաց գալով հասաւ իրա տունը. մի երեկոյ անցնելուց յետոյ գիշերը երազին տեսաւ Ս. Գեղարդայ գմբէթաւոր վանքն խոնարհւած: Նա անշափ հաւատում էր Ս. Գեղարդին: Քնից արթնանալով զարհուրեցաւ. նա չէր կարծում, որ իրա սիրած Ս. վանքը երազին այդպէս տեսնելը լաւ կամ բարի բան լինի և չէր իմանում, թէ ինչ պէտք է գայ իր գլուխին. Աստուծոյ գործը մարդ ինչպէս կարող է իմանալ, միայն ինքը կարող է իմանալ: Առաջին անգամն երբ տեսաւ Ս. Գեղարդը չէր յիշում մինչև ութն օր. ութ օրից յետոյ մտաբերելով, սկսեց աղօթել առ Աստուած և ութը մատաղ արեց, որպէսզի այնուհետև Աստուած գալիք փորձանքներէն ազատէ իրեն: Գառնուկը իրեն գլխի եկածները և տեսածները չը յայտնեց իւր մօրը և պարտական մնաց: Սորան մի քոյր ունէր, որին առաջ շատ լաւ տեղերից ուզողներ եկան, չը տւեցին, որովհետև բարեխօս մարդ չեղաւ, որ միջնորդէր, իսկ չարախօս մարդկանց միջնորդութեամբ տւեցին մի աղայի, որին որ ոչ աղջիկն էր առնում և ոչ մայրն էր տալիս, բայց չար մարդիկը համոզելով գործը գլուխ բերին: Գառնուկը սրանից մի քանի օր անց երազում տեսաւ, որ երկնքումը այլևս արեգակ չը կայ. այլ խաւար է. քնից արթնանալով, շփոթուեցաւ և կանչելով իր նորահարս քրոջը, սկսեց մատաղներ անել մինչև վեց հատ: Սրանք չունէին ոչ ազգական և ոչ բարեկամ այլ մէն միմեկ էին: Աբրահամ Մովսէսեանը գալով, իրեն Գառնուկին ազգական հրա-

տարակեց և բարեկամ ձեռքաւ, մատաղն թոյնաւորելով
կերցրեց Գառնուկին, Գառնուկը թոյնաւորուելուց յետոյ
կորցրեց առողջ դատողութիւնը և սկսեց անասնաբար
ձայն հանել: Աբրահամը տեսնելով Գառնուկի դրութիւնը,
շտապեց գէպի եկեղեցին և այդ տեղ եղող մարդկանց
ասաց, թէ շտապեցէք, եկէք: Գառնուկը այսինչ աղջկայ չը
տալու պատճառաւ այժմ գտնուած է. գիժ բառը լսելուց
յետոյ գիւղի կախարդ ու չար մարդիկը եկան բոլորը
Գառնուկի տունը զուարճանալու համար: Գառնուկը այդ
չար մարդկանց տեսնելուց յետոյ ուռեց, սիրտն ու թոքը
քիչ էր փուլած որ ճաքէր: Գառնուկին թողնելով տան մէջը
այդ մարդիկը բոլոր դուրս թափեցին և դուռն կողպեցին
Գառնուկի վրայ. նոքա հերթիկն էլ փակեցին ու տեսակ
տեսակ զուարճութիւններ էին անում. բայց նոյն
րոպէին կողպւած դռան ճեղքովն ներս գալով Ս. Գե-
ղարդը երեսց Գառնուկին և ասաց. Ս. Գեղարդին աղաչիր
և կը փրկուիս, Գառնուկն երկու ձեռքով բռնելով դուռը
արցունք թափելով աղաղակեց:

Փափագ սարին, սև եղանակ,
Քեզնից բացի չունիմ մէկ հաւատարիմ,
Տրւում են անձս, չեն տալիս ժամանակ,
Քեզնից բացի չունիմ մէկ հաւատարիմ:

Նշանդ երկինք, շողքերդ գետին կանգնած,
Կախեցին հերթիկս, դռներ վրաս փակեցին,
Զորս բոլորս կախարդներ են առած,
Քեզնից բացի չունիմ մէկ հաւատարիմ:

Խաչար, թաղար, յարութիւն տաւ, ո՛ր ես.
Անտակ ծովերի կորուսած հողիքը գտնողը՝ դու ես
Անմահ թագաւոր դատաստանի ուղիղն ես,
Քեզնից բացի չունեմ մէկ հաւատարիմ:

Գառնուկ, լաւ օրերդ արին վատ,
Քարիքս քիչ, թշնամիքս շատ,
Աղաղակի սրբերի ժողովարանն անարատ Գեղարդ,
Քեզնից բացի չունիմ մէկ հաւատարիմ:
Երգն աւարտելուց յետոյ կախարդ մարդիկը քաշուե-
ցին գնացին: Դուռը բացւած էր: Ձմեռն էր ձիւնային ե-
ղանակ, գիւղից մէկ վերստ հեռաւորութեան վրայ ուխ-
տատեղի կար. Գառնուկը դուրս գալով տանից, երկիւղից
ասաց, թէ ուխտ եմ գնում. ոտաբոքիկ և առանց վերար-
կուի երբ որ սկսեց գնալ, գիւղի մարդիկը հարցնում էին,
թէ ուր է գնում այդ դրութեամբ. այն իբր թշնամի և
կախարդ մարդիկը ասում էին, թէ այս ինչ աղջկայ վերս
սիրահարւած լինելով, չի իմանում, թէ ուր է գնում, հա-
նում են ու գնում բռնում ծեծելով ու չարչարելով վերա-
դառնում են գէպի իրանց տունը. մի տարէք այնտեղ ինձ.
Աբրահամ Մովսէսեանը տարաւ իրա բարեկամի տունը,
Գառնուկի լեզուն բռնեց և սկսեց զաղաւաճե ձայն հա-
նել, նոյնպէս ևս զգաց որ այնտեղ իրեն փնտսում է աշխա-
տում էր որ մի կերպ դուրս գնար, բայց չար մարդիկ ի-
քենց չարութիւնները յագեցնելու համար դուռն կողպում
էին և իրանց խմբովը թոյլ չէին տալիս ելնելու, ուզում
էին որ փնտսւէր. Գառնուկը շատ չարչարուեց, յետոյ
հաղիւ կարողացաւ իրան դուրս գցել մի կերպով: Այդ
տեղից ազատուելով, հարեան մի մարդի խնդրեց և ասաց.
քեզ այսքան փող կտամ, ինձ մի կողմի վերայ տանելով,
ազատիր այս կախարդ և չար մարդկանցից. խոստացած
փողն ստանալուց յետոյ, այն մարդն առաջնորդելով Գառ-
նուկին տարաւ մի հարուստի տուն, որպէսզի ազատէր
նրանցից, բայց Գառնուկը այդտեղ գնալով, դարձեալ չը
կարողացաւ ազատ փախ նրանց չարչարանքից. այդ մեծա-
տան տէրը կախարդներին բարեկամ լինելով, իրենց ամ-

բողջ խմբով եկել էին Գառնուկի շուրջը պատել, կատակներ էին անում և տեսակ, տեսակ չարչարանքներ տալիս, Գառնուկը, տեսնելով այդ չար մարդկանցը և դրանց գործած չարութիւնները, սկսեց ձեռքն ու ոտքը քաշուել, ոյժն նուազել և տեսաւ որ ոչ մի բարեկամ ու օգնող չունի, արտասուք թափելով սկսեց դիմել սրբերին և աղաղակով՝

Չունիմ ինձի մէկ բարեկամ,
Անարատ սրբոց արիւն լոյս արտասուք,
Շատացաւ ամեն չարակամ,
Անարատ սրբոց արիւն լոյս արտասուք:

Ի բնութենէ կախարդ ծնաւ չարամիտ,
Ծածուկ տեղից ուղիղ եղաւ ճշմարիտ,
Մարդկանց մէջ խօսքը շինեց ճշմարիտ,
Աղաչեմ սրբոց արիւն լոյս արտասուք:

Գառնուկ, կախարդը եղաւ քեզ դատաւող,
Իրան մտքից ելաւ իրան զինաւոր,
Ինքն իրան զխառն է սուրբ և ճգնաւոր,
Աղաչեմ սրբոց արիւն լոյս արտասուք:

Կախարդները այս տեղից քաշկրտելով և ծեծելով բռնեցին տարան մի առանձին տեղ, ոտքերը կապեցին գերանից գլխի վար և սկսեցին անխնայ կերպով չարչարել. անչափ չարչարելուց յետոյ, գերաններից արձակեցին և սկսեցին ծեծելով տանել հիւսիսային կողմը՝ Քարաղլուխ գիւղը, որի մէկ մասը հայ է, իսկ միւս մասը պարսիկ. ծանելով Գառնուկին յանձնեցին մօլլին, մօլլէն ևս նոյնպէս սկսեց ձեռքն ու ոտքը կապել և անխնայ կերպով չարչարել. փայտից մօմարներ էին շինում, դնում մատների մէջ ու սեղմում, այնքան սեղմում էին, որ մինչև մասներիցը արիւնը գցում էր ձեռքերից. այնտեղ ևս կա-

յին շատ մարդիկ, բարի մարդկանց խնդրեց, որ միջնորդեն ձեռքն ու ոտքն արձակեն և իր ցաւ սկսեց պատմել:

Ընկեալ մարդուն արգելում են, որ չգնայ ժողովարան, Ձեն հաւատում մարգարէից սուրբ բերանի ընելուն, Գոնէ պատմի իրա ցաւն ուղղութեամբ դատարան, Ձէին հաւատում մարգարէից սուրբ բերան ընելուն, Աբրահամ Մովսէսեանը մի քանի ապտակ խփեց Գառնուկին և ասաց ձայնդ կտրիր, բայց այն բարի մարդիկը ազատելով, չը թողեցին որ ծեծէր և սկսեց միւս տունը երգել.

Այս տեղէն ես չեմ ազատուի, ախ, ինձ ազատող,
Չորս կողմս կախարդն առել, տանջում են չար դատող
Մէկը մէկէն վարպետ եղել, զօր ու գիշեր խրատող,
Ձեն հաւատում մարգարէից սուրբ բերանին ալելուն:
Գառնուկ, ընկեալ մարդի դատը մնաց մինչ յաւիտեան,
Որ երկնքէն ուղղութեամբ դատողները դան,
Տեսնենք էլի կը պատմի այն լեզուն ուրացող անօրա վիան
Ձեն հաւատում մարգարէից սուրբ բերանի ալելուն:

Երգն աւարտելուց յետոյ, այդ մարդիկը դարձեալ չարչարելով բերեցին նրան գիւղը, մինչև երեսուն օր այդպէս չարչարեցին, տեսան, որ բոլորովին ուժից ընկաւ, բերեցին քցեցին իրանց տունը. մի ժամանակ այդպէս մնալուց յետոյ, հետզհետէ զգաստացաւ և սկսեց իր մօրը աղաչել և խնդրել, թէ կամենում եմ ուխտ գնալ, մայրն խնդրեց դրացի Փանոսեանին որ գայ իր որդուն տանի որտեղ որ կամենում է. այն մարդը ուրախութեամբ յանձն առաւ ճանապարհին պաշտպանել, Գառնուկին: Գառնուկը այդ մարդու եկաւ հասաւ Երևան քաղաքը և անցնելով գնացին Ս. Էջմիածին ուխտադրութիւն անելու. ուխտը կատարելուց յետոյ վերադարձաւ Երևան և գնալով պարսից Գալվաթ Սուլթանին գանգատուեց իւր ցաւը բայց, Սուլ-

Թանը ուղարկեց իր օգնականն Հայկ կտրապետեանի մօտ։
Հայկը հարցրեց թէ ինչ է գանգատդ։ Գառնուկը սկսեց եր-
գով պատմել իւր ցաւը։

Մի աղջիկ եմ ուզում, որ լինեմ անական,
Մարգարէի դատով դատի, դատաւոր,
Երկու այլքը եղեր են ինձ տէր ու տիրական,

Մարգարէի դատով դատի, դատաւոր։

Հայկ կտրապետեանը հրամայեց, թէ գրեցէք զրա
գանգատը։

Ծառը կտրեն, նրա արմատը լաց կը լինի,
Տեսնենք սար ու քարին ինչ փասս կը լինի,
Ով է տեսել գառը գայլին ազդ լինի,
Մարգարէի դատով դատի, դատաւորը։

Իշխան ես, հաստաւ լինի քո տէրութիւն,
Կը խնդրեմ ծանր ցաւիս արա մէկ քննութիւն,
Դու հաւատում ես, ես էլ եմ հաւատում Ս. յարութեան
Մարգարէի դատով դատի, դատաւոր։

Յամիրս հարցնում էք, անունս Գառնուկ,
Ես եմ մեծ ցաւի տէր առաջդ կայնուկ,
Խեղճ մայրս օւ քոյրս թափում են արցունք,
Մարգարէի դատով դատի դատաւոր։

Գառնուկը գանգատը լսելուց յետոյ, հրաման գը-
րեց և տւեց Գառնուկին, պատուիրելով, թէ կը տանես կը
յանձնես ձեր հասարակութեան տանուտէրին և նա կը
լսէ քո գանգատը ու կը հասնէ քո ցաւերիդ։ Գառնուկը
տանելով հրամանը, յանձնեց տանուտէրին, տանուտէրը
նայելուց յետոյ պատուիրեց, թէ տար առը ձեր գիւղի
նոսրեց և նա կը կատարէ հրամանը։ Մինչդեռ Գառ-
նուկը իւր հարկանի հետ էջմիածնութեան էր, Արշակունի
Մովսէսեանը և Աւետիք Յովսէփեանը յետեւից ման էին
գալիս որպէսզի բռնեն ու չարչարեն։ Օգնականը

Թոյլ մարդ լինելով, ամենեւին անտարբեր գտնւեց դէպի
Գառնուկի գանգատը։ Կախարդ ու շար մարդիկը, տեսնե-
լով, որ տէր ու տիրական չը կայ, եկան բռնեցին Գառ-
նուկին, կապեցին և սկսեցին չարչարել։ ամբողջ ձմեռն
այդպէս չարչարեցին, մինչև երեք ամիս, վերջը զիջանելով
Գառնուկի աղաչանքին, ձեռք ու ոտք արձակեցին և նա
սկսեց այս երգը երգել։

Երբ կանաչար, շուտով թառամեց տերեղ,

Տխրեամ սիրտը այսուհետեւ լաց էլի,

Չար մարդի ուխտերն փափագատուրա,

Տխրուամ սիրտ այսուհետեւ լաց էլի։

Գառնուկը տեսաւ որ հարուի քամին գալիս է և երա-
խաներին ձնծաղիկներ է բերում, իմացաւ, որ գարուն եկել է
և սկսեց միւս տունը երգել։

Հարաւն եկաւ ծաղիկի ժամանակ,

Անիրաւ վիճակը ինձ արել է մէկ տեսակ,

Բանտարկեամ եմ, մինչի երբ է իմ ժամանակ,

Տխրուամ սիրտ, այսուհետեւ լաց էլի։

Տգէտ մարդը կը խաբուի մտքից շատ։

Կը բռնեն լոյս ճանապարհը, կրնին մութ,

Երկնքից, գետնից կը կտրեն խորհուրդ,

Տխրուամ սիրտ, այսուհետեւ լաց էլի։

Չիմանալով Գառնուկ, կեանքս չորացաւ,

Յաւն գիտաւ սրտիս, միտքս տարւեցաւ։

Ընկայ բանտասանքի, հասակս անցաւ,

Տխրեամ սիրտ, այսուհետեւ լաց էլի։

Երգն աւարտելուց յետոյ, նոյն մարդիկը վրայ հասնե-
լով, բռնեցին և սկսեցին չարչարել այնքան, որ բոլորովին
ուժից բնկաւ։ Եւ չէր բանը լսելով Գառնուկի մայրը, մէկի
առաջնորդութեամբ եկաւ այդ տեղ և սկսեց աղաչելով
ասել. այ անխիղճ ու անստուած մարդիկ, ինչու էք իմ

որդուս այդպէս չարչարում, մի կերպով ձեռներից ազատեց և բերեց իրենց տունը: Գառնուկը ինը օր առանց հացի, առանց ջրի մնաց, ծով պահեց, տասներորդ օրը տանից դուրս եկաւ, յսնկարծ այն չար և կախարդ մարդիկը տեսնելով Գառնուկին դրսևում, վրայ հասան և բռնեցին իրանց խմբով և սկսեցին չարչարել, ձեռքերն մէկ սիւնից կապել, ոտքերն միւս սիւնից և այդպէս հերթով ծեծում էին. այդ մարդկանց ուրիշ պարապմունք չուներին, ամբողջ երկու տարի էր, որ Գառնուկի վրայ էին պարապում: Արդէն գարունը էր. կախարդների խմբապետը Աբրահամ Մովսէսեանի և Աւետիք Յովսէփեանի խորհրդով Գառնուկին կապեցին իշի վրայ և սկսեցին տանել Նոր-Պայազիտու քրդերի պատկանող ամարանոցները որպէս թէ գիժ է, տանում էին քրդերի Շեխի մօտը առողջացնելու: Ճանապարհին փոխանակ էշին ծեծելու, որ շուտ գնայ, Գառնուկին էին ծեծում. Գառնուկը տեսնելով ամարանոցի ծաղիկները ու կանաչ մարդագետիներ, աղաչեց այդ մարդկանց, որ ձեռքերն արձակեն, ձեռքերն արձակեցին և ըսկսեց այս երգը երգել:

Էլի բացւեց կանաչ, կարմիր գարունը,
Ով կը լինի ինձ ազատող օգնական,
Ո՞րս ու քոջս թափած արցունքը,
Ով կը լինի ինձ ազատող օգնական:
Երկնից գետինը մէկ մարդ չը կայ, որ գայ
Ինձի այս կապած տեղից արձակայ,
Անբախտութեան շորեր որ հիմա հագայ,
Ով կը լինի ինձ ազատող օգնական:
Գառնուկ, աղաղակի Մ. Գեղարդ գայ,
Կենարար խաչ Ս. Սարգիսն լինի վկայ,
Եղբայր չունիմ, որ քամակս օգնող գայ,
Ով կը լինի ինձ արձակող օգնական:

Գառնուկին այդ տեղից տանելով հասցրին քրդերի Շեխին և յանձնեցին ասելով, թէ այս մարդը գիժ է բերել ենք քեզ մօտ, ուր քո թալիսմանների զօրութիւններով սորան առողջացնես: Շեխն յանձն առաւ և սկսեց իր կախարդական զօրութիւնը գործ դնել, ծեծել և չարչարել. եթէ ծեծի և չարչարանքի պակաս տեղ կար, այն էլ լրացրեցին կարճ միջոցում քրդերը: Այդ մարդիկը դարձեալ այդտեղից վերցնելով Գառնուկին, բերում էին դէպի գիւղը այդ կախարդների խորհուրդն այն էր որ ճանապարհին մի կերպով վերջացնէին Գառնուկին կամ տային գաղաններին որ ոչ մի տեղից ձայն դուրս չը գար, բայց այդ կախարդները երկիւղ արեցին Գառնուկի քեռիներից. նրա քեռիքն Նրեանում բանտարկուած էին երեք տարի ժամանակով. վախենում էին, թէ մի գուցէ բերդիցը դուրս գան և չազատուենք ձեռքներից, եթէ նրանց երկիւղը չը լինէր, անպատճառ կը փճացնէին. նրան բերելով հասցրին գիւղը, ուղիղ երկու տարի շարունակ այդ գրութեան մէջը պահեցին, միշտ կապել, ծեծել և չարչարել և այդպէս չարչարում էին. դրացի գիւղերից մարդիկ գալով պատահեցին և ասացին, թէ այդ մարդուն ինչո՞ւ էք չարչարում և ի՞նչ է պատճառը: Գառնուկը խնդրեց այդ օտար մարդկանց, որ ժամանակ տան պատմի իր ցաւը. այդ մարդիկը Գառնուկին առան կախարդների ձեռքիցը և նա սկսեց երգել այսպէս.

Տերե կարմիր, տամար կապոյտ բացվեց մի ծաղիկ,
Գլուխն թաղ, նետեց սրտիս մէջ մի ծանր ցաւ,
Վառվառում է կրակ, սկսեմ սէր սիրելով չանեմ
Աղաղակ, չար կախարդը ինձ բաժանեց, թողեց
Անփափազ, անում եմ աղաղակ:
Աբրահամ Մովսէսեանը այս խօսքերը լսելուց յետոյ խալոյն վրայ հասնելով ապտակով խփեց, թէ լուր, բայց

այն մարդիկը միջամեցին, թէ թող երգի և սկսեց միւս
տունը երգել:

Եւ չար կախարդ կանաչի դանակ,
Իզուր տեղ տալում ես ինձ տանջանք, չարչարանք.
Երկար ժամանակ, Աստծուց ախ ու վախ չունիս, որ
պահես պատգամք,

Արմատդ անիծած, ծնունդ չար ժառանգ,
Դժոխքի կրակ թողիւր անփափագ, անում եմ աղաղակ:
Գառնուկ, ով կանի կախարդին դատ ու դատաստան
Որ անբերրի ծառերը կանաչելով պտուղներ տան,
Լինի օրինակ սրբերի պատգամք: Կախարդին մարդիկ
Ունեն կազներ են առաջ, որ շտան տանջանք,
Գլուխներն է թագ, դժոխքի պսակ, թողին անփափագ
Անում եմ աղաղակ:

Երգն աւարտելուց յետոյ դրացի գիւղերի մարդիկ
Գառնուկին կախարդների ձեռքից առնելով բերեցին իրանց
տունը. Գառնուկը տասն և մէկ օր ծոմ պահեց. նա արդէն
իմանում էր, որ այդ աղջիկը իրեն չը տւեցին և չեն տալ.
Գառնուկին այդքան շարժաբեցին, ոչ մի տեղից օգնողներ
չեղան, ոչ Գալաւան, ոչ օգնականը. միայն բանտից
դուրս գալով իրեն մայրի եղբայրները և իմանալով իրանց
քրոջ որդու շարժարանքը, շտապելով եկան օգնելու, գալով
քրոջ տունը և նրանց քաջած նեղութիւններն տեսնելով
զայրացաւ սիրտն և սկսեց երգել այսպէս:

ԻՎԱՆ ԱՌԻՔԵԼԵԱՆ

Ինչո՞ւ ես պարկեղ ախրւած
Հաւատա հաւատ ման արի ազատ,
Ցաւ տուցն միմիայն Աստուծա,
Հաւատա, հաւատ ման արի ազատ:

ԳԱՌՆՈՒԿ

Ձայնդ եկաւ ինչպէս գարնան եղանակ,

Ազատիւր ինձ, մայրիկիս եղբայր, հաստատ հաւատա,
Երկու տարի է տալիս են տանջանք չարչարանք,
Ազատիւր ինձ, մայրիկիս եղբայր, հաստատ հաւատա:
ԻԻԱՆ

Բարակ պատի վրա քար չի շարի,
Եթէ քամին կաղնի, նա շուտ կաւերի
Անտէրութեամբ մարդ շուտ կը կախի,
Հաւատա, հաւատ ման արի ազատ:

ԳԱՌՆՈՒԿԸ

Բարի իշխաններ շատ կան աշխարհքը
Նորանց դէմն առեր է անիրաւ կախարդը,
Որտեղից պէտք է առնեն իրենց տանջանքը,
Ազատիւր ինձ, մայրիկիս եղբայր, հաստատ հաւատա:
Իւսնը ինքը շատ քաջ և բարի մարդ էր, բայց իւր
որդկերանց պատճառաւ բնկած էր բանտը:


ԻԻԱՆ

Իւսնն ազատուեց, երեք տարի էր ժամանակը
Հայրի քամակը թող չը ծընի վատ ժառանգը,
Էլի պիտի դնամ այն դժոխքն ու կրակ,
Հաւատա, հաւատ ման արի ազատ:

ԳԱՌՆՈՒԿ

Գառնուկ, անիծուած էր մեր աւիստը, կանաչաւ
Բարի չը հանդիսաւ, չար մարդերին ճանաչանք:
Երկինքն Աստծուն, գետինք քեզի աղաչանք,
Ազատիւր ինձ, մայրիկի եղբայր, հաստատ հաւատա:
Երգը վերջացնելուց յետոյ, Իվանը վերցնելով քրոջն
ու Գառնուկին տարաւ իրանց Կապուտափանք գիւղը և ա-
զատեց այն չար ու կախարդ մարդանցից: Նրանից յետոյ
Գառնուկը դնաց զանգատ պարսից կառավարութեանը
զաւառապետը հրամայեց տանուտէրին, տանուտէրն կան-
չեց Սիրանոյշ Վարդանեանին և հարցրեց, թէ դու այս տը

դային ինչու չառար, աղջիկն պատասխանեց դորան մարդ-
կութիւն չունի, նորա համար չառայ. Գառնուկը նորից
գանգատեց իր ապրանքների և ունեցածների մասին կա-
խարդ մարդկանց վրայ, որ բոլորը փչացրել են, դատաւորը
կանչեց գիւղից մի քանի մարդկանց և հարցրեց երգմամբ,
թէ ճիշտ է, այդ մարդիկը Գառնուկի կայքը տարել կամ
փչացրել են, ուղիղն ասացէք. մարդիկը բոլորն էլ պատաս-
խանեցին, թէ դա գիժ է և անտեղի է գանգատուում, դո-
րան ոչինչ չունէր. թէ և Գառնուկը նորից ծախսեր շատ
արեց, բայց դարձեալ գործը ոչնչացրին, իսկ Գառնուկի
մայրը անտէրութիւնից սովամահ եղաւ: Ամեն գործը վեր-
ջանալուց յետոյ, Վարդանը աղջիկը տուեց Գաւթի Աբրա-
համեանին, նա էլ սկսեց հարսանեաց պատրաստութիւն
տեսնել. եօթն օր և եօթն գիշեր հարսանիք անելուց յետոյ
նրանք հասան իրենց նպատակին: Իսկ Գառնուկը թողնելով
տունը ու հողը և ամեն ինչը, եկաւ Երեան քաղաքը այն
չար մարդկանց երկիւղից:



Մ Ո Ւ Խ Ա Մ Բ Ա Ջ Հ Է Ք Ե Ա Ռ Ի Յ Ա Ռ Ա Ջ

Թւին հազար եօթն հարիւր ութսունին
Ուխտ արեցի Ս. Գեղարդայ գնացիմ հասամ վանքիկային
Հարիւր վաթսուն սերմ ու ծառին,
Պառուկներն Ս. Գեղարդայ:

Թամաշայ կանանչ ծառեր,
Մէջը ման կուգայ մարախներ,
Վերի ոչխար, ջէյրաններ,
Հա կը կտրդան կագաւներ,
Աղաչանքն Ս. Գեղարդայ:

Ճամբէն աջակողմից կուտար,
Ամենցու փափազն կը տար,
Հայոց յոյս ու հաւատի տէր,
Հաւատը Ս. Գեղարդայ:

Վանքը քիչ մը ջրից եզր էր,
Ամէն անօրէն մէջը կ' հայանէր,
Վարդապետը կոչում կանէր,
Ով որ տեսնէր կը զարմանէր,
Ժողովարանը Ս. Գեղարդայ:

Վերի վանքը Վարդավանք ա,
Ներքի վանքը սրբարանք ա
Աւագանը գետ յորդանք ա,
Ամեն բանը շատ հնարք ա,
Հնարքը Ս. Գեղարդայ:

Համբուրեցի Այրոյ վանքը,
Մէջն է դրած ոսկէ թաղը,

Առաքելոց պատւիրանքը,
Ամենայն ցաւի փրկանք,
Փրկութիւնը Ս. Գեղարդայ:

Մեծատունը մարքարանք ա
Գմբէթն նրանից աղաք ա,
Հողն ու քարն էլ նորանց փափագ ա,
Զարգարմունքը Ս. Գեղարդայ:

Դուռ կը բացւի հարաւային,
Մէջը կը մանի լոյսն ու բարին,
Երկու կազաւ դռան քարին,
Օրինակ ենովք եղիային,
Աղաչանքն էր Ս. Գեղարդայ:

Դռան քարն որ նախշած են,
Կասես թէ դրախտական ա,
Ամենը աղօթքով են շինել,
Բոլորը ճգնաւորաց բան ա,
Երկու տեղով գանկեր կախած,
Հաւատացողը ձէն կստանայ,
Զայնը Ս. Գեղարդայ:

Դուռն կը բացուի մէկն աջ, մէկը ձախ ա,
Արդարոց սիրտը ուրախ ա,
Մեղաւորին փախ ա,
Մութավելին մոմ կը ծախայ,
Հուսեղէն մոմեր Ս. Գեղարդայ:

Տիրացուք ջերկւած են,
Սարկաւագները գրեանքն կը բացեն,
Ս. սեղանի առաջ կազնած են,
Աղաղակում են Ս. Գեղարդայ:

Վարդապետը մոտաւ պատարագ,

Ս. Աստուածածնի աղաք,
Յովհաննէս Մկրտչի աղաչանք,
Բարեխօս լինի Ս. Գեղարդայ:

Նօթը ջահը կախ արած են,
Հուսեղէն մոմեր կպցրած են,
Ոսկէ սկիհը նորոգած են,
Պատարագին երես կը բացեն,
Սրբութիւնը Ս. Գեղարդայ:

Երկու ակնունքը կախ արած են,
Մէկը կապոյտ, մէկը կանաչ,
Գիշեր ցերեկ աղաչանք են,
Սրբոյ Գեղարդայ առաջը,
Թաղաւորները աղաղակում են,
Դու ես պահպանող Ս. Սաչ,
Տէրութիւնը Ս. Գեղարդայ:

Վանքը համբուրեցի, որ ելայ զուրս,
Սիրտս եկաւ հաւատ ու յոյս,
Հաւատացողը միշտ կը տեսնի լոյս
Լոյսը Ս. Գեղարդայ:

Կաթիլ չնուզ որ կանգնած են,
Կաքաւենք ջերկւած են,
Ամենայն օրինակ շինած են,
Զարչարւողներ փափագ առած են,
Փափագն Ս. Գեղարդայ:

Գմբէթն ուղիղ որ կանգնած ա,
Զորս պատկեր գլուխը դրած ա,
Սաչն վերան օծւած ա,
Ով աղաղակի, նեղ տեղից հանած ա,
Զօրութիւնը Ս. Գեղարդայ:

Զորս բոլորը ձգնաւոր ա
Ինքը մէջը թաղաւոր ա
Յովհաննէս Մկրտիչը քաւոր ա,
Յաւիտեանս դատաւոր ա,
Դատողութիւնը Ս. Գեղարդայ:

Ով չի գնացել, բան չի խմանայ,
Գեղարդ Յիսուս միայն ա,
Ս. արիւնը թողեց նշանայ,
Նշանութիւնը Ս. Գեղարդայ:

Աշունքն է Ս. աստութիւն,
Զմեռը՝ խաչ օրհնութիւն,
Դարունն է Ս. Յարութիւն,
Յարութիւնը Ս. Գեղարդայ:

Ով որ հաւատայ իրան կամին,
Հողն ու ջուրը, արեգակը, քամին,
Դրանց մէջն է հողիքը յաւիտենին,
Յարութիւն առնի Ս. Գեղարդայ:

Ամառն ա, ծաղկունք, բարութիւն,
Վարդապետները անում են ձգնութիւն,
Սրբոց հարսանիք խնդութիւն,
Երկինքն ա Ս. Գեղարդայ:

Մահից շատ կը վախենայ Գառնուկ,
Երկիւղից կը թափի արտասուք,
Խնկի համա կանաչ ծառնունք,
Օթեանը Ս. Գեղարդայ:

Սուրբ Գեղարդը լինի ձեզ պահապան,
Որդքիներիդ էլ օգնական,
Ով որ տայ աշըղին դովրան,
Լինի բանին աջողական:

Տարին թամամում է չորս եղանակով.
Զմեռը վատ բնութեամբ,
Յամաքում են ծառերը, թառամում են ծաղկունքը,
Վատանում են ամեն կանաչեղէնները:

Կաշնում դաշտեր, կտրում ճանապարհ,
Սկսում քամին ու ձիւն ծածկում սար ու քար,
Եղանակն ցուրտ, դօր ու գիշեր անդադար,
Վնասում մարդիկին, թռչունքին չի տայ
ժամանակ:

Ահա գարուն որ բացւում է քաղցր տխուր եղանակ
Զարդարում են ծառն ու ծաղկունք ամեն մի օրինակ,
Կարօտած մարդերը, թռչունքը առնում են փափազ,
Յիշում են մեծանուն դարնան եղանակ ամեն ժամանակ

Ամառն է գարնանից մեծահասակ,
Բարկանում է արեգակ, շատ շոգ ժամանակ,
Տաքանում հողն ու քար, ինչպէս վառ կրակ,
Հասցնում պտուղները ամէն մինը մի տեսակ:

Աշունքը լաւ է, քաղցր եղանակ,
Տանում են ցորենները, մրգեր ամենը կշռքի տակ,
Կարօտած մարդիկ առնում են փափազ,
Տալիս են Աստծուն փառք ամեն ժամանակ:
Հիւսիսն է ձմեռայ բարեկամ, արեւընէ դարնան
օգնական,

Հարաւն է ամառայ առուտուրական,
Արեւմուտն է աշնան, որ մանում է ամեն օր իր օթեան,
Գան աղօթք անեն եկեղեցականք իրիկան, առաւօտ,
ամեն ժամանակ,

Այդ եղանակներից ամենը մարդկային կան,
Զարն բարուն սպանում է, տեսնենք բարին ինչ է
նրան պարտական,
Նրան ազատող օգնում է ուրացող սուտ վկան,

Լինում է աշխարհիս մէջ մի վատ օրինակ:
 Բարի մարդի սրտին կայ դատողութիւն,
 Իշխանութիւնի մօտէն մեծ երկիւղութիւն,
 Ընկած մարդին անում մեծ ողորմութիւն, վարձ տը-
 ւող չունի ուրացողութիւն,
 Դա էլ նման է, ինչպէս զարնան եղանակ:
 Ուրացող մարդը հպարտ,
 Աշխատանք չունի, սրտից հանգարտ,
 Հալալ հարամ չի գիտայ, մտքից կախարդ,
 Դա էլ նմանի ինչպէս ձմեռայ ցուրտ եղանակ:
 Յուլն խոնարհւած է տիրոջ հպատակ,
 Հալալ աշխատում է, ուղիղ է վաստակ, զործում են
 նշխարք,
 Գլխի վրայ առնում, տանում են անմահ սլատարազ
 Վրէն ապւում է Աստուծոյ կերպարանք:
 Կատուակերպ առիւծին ունի մեծ անուն,
 Գողգոթում, սար ու ձոր ամեն կենդանիք վախենան,
 Վայրենի տաւար ոչխարներին շատ է վնասում,
 Դա էլ շար ժառանգ է երկար ժամանակ:
 Վայրենի տաւար ոչխարներն անդադար
 երկիւղից թռնում են բարձր սար ու քար,
 Մէկ կողմէն որսկաններ, մէկ կողմէն անտառ,
 Դրանք էլ բանտարկւում են ամեն ժամանակ:
 Լայնաբերան գայլը առամը արիւնոտ,
 Աշխատանք չունի, երեսն անամօթ,
 Եթէ զօրն ննջում է, միտքն է ոչխարի մօտ,
 Դա էլ հարամ է կերած ամեն ժամանակ:
 Ոչխարները պտղատու են շատ մի ժամանակ,
 Կթում են կաթը, պատուական է սերն ու կարագ,
 Պատրաստում են սեղան արժանի իշխաների աղաք
 Բարի են զրանք էլ ամեն ժամանակ:

Մահիչ օձը քար ու խոտի մէջ կը քնայ,
 Կարգը որ գնայ, մարդս էլ չիմանայ,
 Յանկարծին կը տայ, ձեռաց կը մահանայ,
 Դա էլ կը նմանի ինչպէս դժոխքի օրինակ:
 Հաւը պահելու համար լաւ է, ձու է անում գովական,
 Աքաղաղն կանչում է, դուրեկան ա,
 Եթէ տէրը քնած լինի չի իմանայ,
 Աչքին կ'տայ փաստակար ա, դա էլ յիմար անասուն
 կերպարանք:
 Շունը անիրաւ գիտնական,
 Դողդոթում է հայհոյական,
 Եթէ տէրը քնած լինի չի իմանա,
 Ծանօթին բաբի, անծանօթին մահիչ կերպանակ:
 Շատերը քեզ խեղճի են՝ գալիս, աղւէս,
 Կը մտնես աղքատ պառաւի հերթէ՛հաւեր կը տանես,
 Վերջին մորթիդ քիւրդերին կը յանձնես,
 Դա էլ նման է սուտ ասող մարդի օրինակ:
 Կապկին կը բռնեն այլեր,
 Կը բերեն քաղաք, կը տանեն գիւղեր,
 Կերպն զազանի, մարդու նմանի ձեռքեր,
 Դա էլ շարչարում են մեղաւոր մարդու օրինակ:
 Անունը կանչում են նապաստակ,
 Ունի էլ որ խնդրի, նա չի տայ ժամանակ,
 Թռչունք, ժամունք նորոգել են տալիս տանջանք, շար-
 չարանք,
 Դա էլ ամօթալի է ամեն ժամանակ:
 Թռչունների մէջն էլ կայ հարամ, արնակեր
 Կառուցը զէնքը, կատուի ճանկեր,
 Արիւնաշաղաղ անում խեղճուկ կազաւներ,
 Դա էլ անիրաւ է առիւծի կերպարանք:
 Սոխակներ երգում են քաղցր եղանակ,

Յարեան, կարեան կռուներն կանչում են ջոկ տեսակ,
Բարիքը նման են դրախտի ժառանգ,
Դուզին խօսում է ամեն ժամանակ:

Տեսէք, ինչ է անում ակռաւ, հաւի ճուտերն
բռնեց, ծառի ճղին տարաւ

Բաժանեց, իրա զաւակներին հետ կերաւ,

Հարցնողին երգմամբ ուրացաւ,

Դա էլ նման է ուրացող մարդի:

Սար ու քար ծաղիկ կապաւ,

Երգում է շարական, ունի մեծ համբաւ,

Արճիճը կպցնելուս արիւնը թափաւ,

Դա էլ մարտիրոսում է ամեն ժամանակ:

Անիծւիս գու, ճանճի բղէղ,

Հիւանդ մարդի երես կծելով կը քրքրես

եթէ ճանապարհ լինի, ուղեղն կը մտնես,

Դա էլ նման է ամառւան շոգի եղանակ:

Օրհնուիս գու թիթեռնակ,

Ինչ ունի մի բարի կերպարանք,

Ջրերի դրաղէն առնում է փափաղ,

Վնաս չի տալի աշխարհին ոչ մի ժամանակ:

Վարդն ու փուշն ծաղկում են մի ծաղիկ,

Փուշը զլուխ է տալիս լինում ծակծակիկ,

Դիւղի աղքատ երեխէք գնում են ոտաբոբիկ,

Դա էլ չար բոյս է ամեն ժամանակ.

Վարդն նման է մարգարէից օրինակ,

Համա տալիս եկեղեցւոյ եղանակ,

Դա է հաստատ դրախտի նշանակ,

Բարի մարդկանց յոյսն սրտերի փափաղ ամեն ժամանակ

Աստուծ միտք արեց ամեն բանը կատարեց,

Մարդկային լեզուով ծառ ու ծաղկունքին պտղով
զարդարեց,



Տասն պատգամք մարգարէից յանձնեց,

Մարգարէք դրին տէրութիւնների օրինակ:

Տէրութիւններն օրհնուած են օծնուած,

Ջորքեր ունեն ոսկէ զգեստով զարդարւած,

Չար մարդիկը նրանց ձեռքին յաղթւած,

Ջգուշ են նրանք ամեն ժամանակ:

Խելք տուող, ողջ արող Աստուծն է, Մանուկ,

Եթէ չը կամենայ մարդս ցնորուկ աւերակ,

Յուսայ երկինք, անխախտ տէրութիւն Աստուծ,

Նշան եկեղեցւոյն խաչուկ իրիկուն, առաւօտ, ամեն
ժամանակ:



Այս ցաւը, որ իմ գլուխն եկաւ, ամենայն բարի մարդ-
կերանց որդու զլսին թող չըզայ: Սբրահամ Մովսէսեանի,
Աւետիք Յարութիւնեանի ձեռքերից ինչ չարչարանքներ
քաշեցի գիշերը չարչարում էին, ասում էին. ականջներդ
պէտք է ծակենք, կախ տանք գերանից, տեսնենք, ով պէտք
է քեզ օգնի: Չար մարդկանց քով կեղծաւորաբար լաց էին
լինում և իրենց ցաւացողներ էին հանդիսացնում:

ՎԵՐՋ





Հայաստանի Ազգային գրադարան



NL0431411

25474